

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

BASIC CONCEPTS (DEFINITIONS)

Սույն ժողովածուում ներառված նույնանուն ցուցանիշները տարբերվում են իրենց ձևավորման աղբյուրներով և մեթոդաբանական որոշ առանձնահատկություններով:

Ժամանակագրական շարքերով (2006-2010թթ.) ներկայացված են վարչական ռեգիստրներից ստացված և տարբեր այլ աղբյուրներից ձևավորված ինտեգրացված տեղեկատվությունը: Առանձին բաժնով ներկայացված են նաև տնային տնտեսությունների (հետայսու՝ ՏՏ) կենսամակարդակի ամբողջացված հետազոտության շրջանակում ՀՀ աշխատանքային ռեսուրսների դիտարկման 2009-2010թթ. արդյունքները:

Ստորև ներկայացվում են այն սահմանումներն ու հավակցությունները, որոնք ընդհանուր են նույնանուն ցուցանիշների համար՝ անկախ դրանց ձևավորման աղբյուրների, իսկ առկա տարբերությունների վերաբերյալ պարզաբանումներ տրվում են համապատասխան բաժիններում:

Ներկայացված տվյալները հիմնականում հաշվարկված են միջին տարեկան կտրվածքով:

Տնտեսապես ակտիվ բնակչության մեջ ներառվում են գրադվածները և գործազուրկները, ովքեր դիտարկվող ժամանակահատվածում աշխատանքի շուկայում ապահովում են աշխատուժի առաջարկը՝ ապրանքների և ծառայությունների արտադրության համար:

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության մեջ ներառվում են աշխատունակ տարիքի անձինք, ովքեր հետազոտվող ժամանակաշրջանում **չեն աշխատել և աշխատանք չեն փնտրել**՝ չեն եղել գրադված կամ գործազուրկ, մասնավորապես.

- առկա ուսուցմամբ սովորողները, ուսանողները,
- տնային տնտեսությամբ գրադվածները,
- կենսաթոշակատուները և հաշմանդամություն ունեցող անձինք,
- երեխաներին, հիվանդ հարազատներին խնամողները,
- զանազան պատճառներով չաշխատող և աշխատանք չփնտրող այլ անձինք:

The same indicators included in this handbook differ from each other by source of formation and some methodological peculiarities.

The findings of administrative registers and the integrated information from other sources are presented by time series (2006-2010). The handbook includes also the separate section concerning results of observation of labour resources of RA conducted within the framework of Households Integrated Living Condition Survey for 2009-2010.

Definitions and concepts that are common for the same indicators irrespective of their sources of their source of formation are presented below and explanatory notes on available differences are presented in appropriate sections.

Presented data mainly were computed by average annual basis.

Economically active population (labour force) comprises all employed and unemployed population in the reference period, who form the labour force supply in the labour market for production goods and services.

Economically inactive population is the persons of working age who did not work and did not search for a job during the observation period: who are not considered employed or unemployed. Namely, these are:

- full-time students, pupils;
- housekeepers;
- pensioner, disabled;
- care-givers to children, sick relatives;
- persons not working and not searching for a job for various reasons.

Տնտեսական ակտիվության մակարդակը տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում:

Աշխատանքային ռեսուրսները տնտեսապես ակտիվ (գրադված և գործազուրկ) և ոչ ակտիվ (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող) բնակչության հանրագումարն են:

Աշխատանքային ռեսուրսները ձևավորվում են աշխատունակ տարիքի աշխատունակ բնակչությունից, աշխատող կենսաթոշակառուներից և աշխատող դեռահասներից:

Զբաղված է համարվում անձն, ով դիտարկվող ժամանակահատվածում.

- ունեցել է վարձու կամ ոչ վարձու աշխատանք, անկախ այն հանգամանքից՝ աշխատանքը եղել է մշտական, ժամանակավոր կամ սեզոնային, միանգամյա կամ պատահական,

- ժամանակավորապես տարբեր պատճառներով բացակայել է աշխատանքից.

- գրադված է եղել տնային կամ գյուղացիական տնտեսությունում, իսկ արտադրված արտադրանքը նախատեսված է եղել լրիվ կամ մասնակի իրացման, կամ սեփական վերջնական սպառման համար, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է կազմել տնային տնտեսության սպառման մեջ:

Զբաղվածներն ըստ կարգավիճակի դասակարգվում են վարձու և ոչ վարձու աշխատողների:

Վարձու աշխատողն անձն է, ով աշխատում է գործատուի հետ կնքած պայմանագրի, աշխատանքի ընդունվելու հրամանի կամ ձեռք բերված որոշակի գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա և ստանում է դրամական և (կամ) բնափրային փոխհատուցում՝ աշխատավարձ:

Ոչ վարձու աշխատողն անձն է, ով իրեն ինքնուրույնաբար է ապահովում եկամտաբեր տնտեսական գործունեությամբ և գրադված է սեփական գործում (բիզնեսում), կայացնում է արտադրական որոշումներ կամ լիազորում է այլ անձի (անձանց), գործունեությունն իրականացնում է վարձու աշխատողների ներգրավմամբ կամ առանց վարձու աշխատողների:

Ոչ վարձու աշխատողներն ըստ կարգավիճակի թվարկված են ստորև:

Economic activity rate is the share of economically active population in the total number of labour resources.

Labour resources are the sum of economically active (i.e. both employed and unemployed persons) and economically inactive (not having and not searching for a job) population.

Labour resources are comprised of the employable population of working age, working pensioners and working teenagers.

Employed is someone, who during the reference period:

- had been wage-earner (employee) and non wage-earner, regardless of whether the job was permanent, temporary or seasonal, one-off or casual were absent temporarily from the work due to different reasons;

- was temporarily absent from work for various reasons;

- was engaged in household or farm while the production was intended for full or partial sale or exclusively for own final use, provided that the production had a significant share in household consumption.

Employed persons by their status are distinguished to employees or non-employees.

Employee is a person who works on a contract based term or by employer's order or in according to the written or oral agreement and receives (gets) the payment in cash and (or) in kind as a wage/salary.

Non-employee is a person who on his/her own engaged in profitable economic activity and employed in his/her own business, takes decisions concerning production or authorize other person(s), implements activity with or without involving employees.

By their status, non-employed are classified by the following groups:

• **Գործատուն** անձն է, ով ինքնուրույնաբար կամ մեկ կամ մի քանի գործընկերների հետ միասին ղեկավարում է սեփական բիզնեսը և մշտապես վարձում է մեկ կամ ավելի աշխատողներ:

• **Ինքնագրավածն** անձն է, ով զբաղված է եկամտաբեր գործունեությամբ ինքնուրույնաբար՝ առանց աշխատողների ներգրավման, եթե նույնիսկ ներգրավում է աշխատողներ, այն չի կրում մշտական բնույթ (օրինակ, գյուղացիական տնտեսություն վարող անձը սեզոնային աշխատանքների համար կարող է որոշակի աշխատանքներ կատարելու համար ժամանակավորապես ներգրավել վարձու աշխատուժ):

• **Առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամն** անձն է, ով աշխատում է ընտանիքի կամ SS անդամին (ազգականին, բարեկամին) պատկանող ընտանեկան կազմակերպությունում (տնտեսությունում) օժանդակելու, օգնելու նպատակով և չի ստանում դրամական և (կամ) բնաիրային փոխհատուցում:

• **Արտադրական, սպառողական կոոպերատիվի անդամն** անձն է, ով կոոպերատիվի ակտիվ (աշխատող) անդամ է, մյուս անդամների հետ հավասար իրավունքներով մասնակցում է արտադրության կազմակերպմանը, արտադրանքի իրացմանը, կազմակերպության եկամուտների բաշխման հետ կապված հարցերի լուծմանը:

Զբաղվածության մակարդակը զբաղվածների թվաքանակի տեսակարար կշիռն է աշխատանքային ռեսուրսներում:

Գործազրկության մակարդակը գործազուրկների թվաքանակի տեսակարար կշիռն է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակում:

Աշխատաժամանակը ժամանակի այն հատվածն է, որի ընթացքում աշխատողը ֆիզիկապես կատարում է նախատեսված աշխատանքը: Աշխատաժամանակը բաժանվում է երկու հիմնական խմբի.

- նորմալ աշխատաժամանակ,
- փաստացի աշխատած ժամանակ:

Նորմալ աշխատաժամանակն օրենքով կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված աշխատաժամանակն է: Աշխատաժամանակի նորմալ տևողությունն օրենսդրորեն սահմանված է ոչ ավել քան շաբաթական 40 ժամ:

Փաստացի աշխատած ժամերը որոշակի ժամանակի ընթացքում ապրանքներ արտադրելու և ծառայություններ մատուցելու համար փաստացի ծախսված ժամանակահատվածն է, որը կարող է լինել սովորաբար աշխատած ժամաքանակից ավելի կամ պակաս:

• **Employer** is a person, who manages his own business independently or with one or some partners and always hires one or some employees.

• **Own-account worker** is a person, who is engaged in profitable activity without involving employees or even if employees are involved in, it hasn't regular character (for example – farmer can temporarily involve hired labour force for certain work).

• **Unpaid (contributing) family worker** is a person, who works free of charge in the organization (farm), which belongs to a family member or relative, with the aim to support and help and doesn't receive any compensation in cash and (or) in kind.

• **Member of producers'/consumers' cooperative** is a person who is an active (working) member of a cooperative, has equal rights to participate in the organization of production, sales of the product, distribution of cooperative's income.

Employment rate is the share of employed population in the total number of labour resources.

Unemployment rate is the share of unemployed population in the total number of economically active population.


Working time is the period of time during which the employed person physically implements the job. Working time is split into two major groups:

- regular working time;
- time actually worked.

Regular working time is the time specified by law or collective agreement. The normal duration of working time defined by the legislation is no more than 40 hours per week.

Hours actually worked include actual time spent on production of goods and rendering of services during the defined time period that can be over or less usual hours of work.

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆ (ԿՈՆՑԵՊՏԻԱՆ) ԸՍՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ¹
BASIC CONCEPT BY THE ADMINISTRATIVE ACCOUNTING SYSTEM¹



* Գրանցված իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում:
Registered legal units in the State Register.

** Գյուղացիական տնտեսություն:
Farm.

¹ Ըստ ԱՄԿ և (կամ) Եվրոստատի մեթոդաբանության հիմնադրույթը ներկայացված է էջ 101-ում:
The concept is presented by the ILO and (or) Eurostat methodology on the page 101.